ՀՐԱՉԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ, Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), *ԵՊՀ հրատ., Ե., 2009, 529 էջ:*

Գալուստ Գյուլբենկյան բարեգործական հիմնարկությունը ազգօգուտ գործունեություն է ծավալում ինչպես աշխարհասփյուռ հայության մեջ, այնպես էլ մայր հայրենիքում: Նրա միջոցներով հայրենիքում լույս են տեսնում հայագիտական արժեքավոր աշխատություններ: Երևանի պետական համալսարանի հայագիտական կենտրոնի երաշխավորությամբ վերջերս լույս տեսավ վաստակաշատ գիտնական, ՀՀ ԳԱԱ իսկական անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրաչիկ Սիմոնյանի՝ բացառիկ հետաքրքրություն ներկայացնող մի աշխատություն, որի վերնագիրն ամեն ինչ ասում է գրքի մասին. «Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ)»:

1895–1896 թթ. զանգվածային կոտորածներից զերծ մնացած հայկական Կիլիկիան 1909 թ. ապրիլի 1-ին ենթարկվեց աննկարագրելի սպանդի: Մինչ այդ, 1908 թ. հունիսի վերջին Օսմանյան կայսրությունում կատարվել էր երիտթուրքական «հեղափոխությունը», և իշխանության գլուխ անցած «Միություն և առաջադիմություն» կուսակցությունն ազդարարել էր, որ Թուրքիան դառնում է «ազատության, եղբայրության և հավասարության» երկիր: Այդ կարգախոսից ոգևորված արևմտահայությունը, կարծես մոռանալով դարերի ընթացքում տեղի ունեցած թուրք-քրդական (ընդհանրապես մահմեդական) խժդժությունները, հուսավառ նայեց ապագային և ձեռնամուխ եղավ «օսմանյան հայրենիքի» վերածնությանը: Բայց «հեղափոխությունից» 9 ամիս անց արևմտահայ ժողովրդի մի բարգավաճ հատված՝ կիլիկիահայությունը, ենթարկվեց անմարդկային ջարդի, կոտորածների, չլսված խոշտանգումների: Ընդամենը 10-12 օրվա ընթացքում հրի ճարակ դարձան, ավերվեցին շեն քաղաքները, գյուղերն ու ավանները, քարուքանդ եղան բազմաթիվ դպրոցներ ու եկեղեցիներ, այրվեցին մշակույթի անգնահատելի գանձեր, բազմաթիվ ձեռագիր հիշատակարաններ, անմարդկային, գազանային ձևով խոշտանգվեցին մոտ 35.000 հայ, ողջ մնացածներից շատերը հետագա օրերին մեռան հոգեկան ցնցումից, իսկ ապրողների հոգում մինչև մահ մնացին այդ անդարմանելի վերքերն ու կսկիծները: Ժամանակի հայ պարբերական մամուլի բազմաթիվ օրգաններ («Բյուզանդիոն», «Արևելք»,«Սուրհանդակ», «Ժամանակ», «Կոհակ», «Հայրենիք», «Ազդակ», «Արևելյան մամուլ», «Անահիտ» և այլն), հասարակական, հոգևոր, մշակութային գործիչներ հուշագրություններում, ականատեսների վկայություններում իրենց վերաբերմունքն արտահայտեցին մարդկության պատմության մեջ նմանը չունեցող նախճիրի նկատմամբ: Հր. Սիմոնյանի աշխատությունը նվիրված է այդ իրադարձությունների քննարկմանը: Բավական է ծանոթանալ ներածության մի քանի էջերին, որպեսզի պատկերացում կազմենք, թե ինչ տքնաջան աշխատանք է կատարել հեղինակը, և ինչ հարուստ աղբյուրագիտական հենք ունի ուսումնասիրությունը. հատկապես ծանրակշիռ տեղ են գրավում ՀՀ ազգային արխիվի, Չարենցի անվան գրականության ու արվեստի թանգարանի և Մատենադարանի արխիվների տարբեր ֆոնդերի բազմաթիվ արժեքավոր վավերագրերը: Արժանահավատ սկզբնաղբյուրներ են նաև ականատեսների հուշագրական պատումները, 1909–1920 թթ. ընթացքում լույս տեսած, այդ թեմային նվիրված աշխատությունները, վկայությունները, տեղեկագրերը: Այդ բոլորի քննախույզ հետազոտությամբ, դեպքերի վերլուծությամբ և համադրությամբ ստեղծվել է կուռ, բարձրարժեք գիտական աշխատություն, որը բաղկացած է ներածությունից,

4 գլուխներից, խիստ արժեքավոր հավելվածներից: Դրանք բոլորն էլ ունեն գիտական բարձր արժեք: Ներածությունը ներկայացնում և քննարկում է աշխատության աղբյուրագիտական հենքը, հատվածներ է նվիրում Կիլիկիայի անցյալին, ներկայացնում բնակչության ազգային կազմը, թվաքանակը, վարչական բաժանումը, վերհանում կոտորածների պատճառները, ջարդի առիթները և սադրանքները: Գրված է կուռ տրամաբանությամբ, բազմաթիվ հարցերի խորաքնին վերլուծությամբ:

Աշխատության առաջին գլուխը նվիրված է Ադանա քաղաքի կոտորածների կազմակերպման, դեպքերի և իրադարձությունների վերլուծությանը: Հեղինակը համոզիչ փաստերով ցույց է տալիս, որ Ադանայի հայության կոտորածը պատահականություն չէր, այլ լավ մշակված ծրագրի գործադրություն: Օգտագործելով ժամանակի մամուլի հրատարակած փաստերը՝ հեղինակը նկարագրում է կոտորածների ընթացքը, ջարդարարների գործողությունները: Հայերի ունեցվածքին տիրանալու համար թուրքերը նույնիսկ իրար էին սպանում, ապա հայտարարում, թե հայերն են սպանել մահմեդականներին: Կոտորածներից միայն երկու ժամ անց տեղի հայությունը հասկացավ, որ նախճիրներ կազմակերպողը իշխող վարչախումբն է՝ իր զորքերով ու ոստիկաններով: Այդ ժամանակ մոտավորապես հարյուր հայ երիտասարդ, որոնք «հեղափոխությանը» հաջորդած «ազատության» օրերին զենք էին ձեռք բերել, փողոց դուրս եկան և շղթա կազմած դիմադրեցին ջարդարարներին: Հայերի առաջին համազարկերը սարսափահար արեցին նրանց, և ոճրագործները տագնապած փախուստի դիմեցին՝ բղավելով, որ քաղաքում կռվում են ֆիդայիների ջոկատներ: Աշխատության հեղինակն ապացուցում է, որ Ադանայի նահանգապետ Զևադ բեյը, զինվորական հրամանատար Ռեմզի փաշան (1895 թ. Զեյթունի հերոսական ապստամբության ժամանակ պարտված հրամանատարը) ջարդերի կազմակերպիչներն էին: Նրանք, զայրացած փոքրաթիվ հայերի դիմադրությունից, լրացուցիչ զորք են տրամադրում, զինում բամբակի արտերում աշխատող՝ Միջագետքից եկած 20 հազար քրդերի: Փոքրաթիվ հայերի՝ ամբողջ օրը ցույց տված դիմադրությունը ջարդերի կազմակերպիչներին ստիպեց մշակել նոր ծրագիր. նահանգապետը 500 հրձիգ առանձնացրեց՝ հայաբնակ թաղերի տները, եկեղեցիները, դպրոցները, հրի ճարակ դարձնելու նպատակով: Այդ ժամանակ Կ. Պոլսի կենտրոնական իշխանությունները հատուկ հեռագիր են ուղարկում ջարդի կազմակերպիչներին՝ գործել զգուշությամբ, չվնասել օտարերկրյա հյուպատոսարանները և մյուս հաստատությունները: Գիտնականը բացահայտում է մեծ տերությունների հյուպատոսների՝ սկզբում լիովին անտարբեր, ապա՝ ցուցադրական օգնությունը «Կարմիր խաչի» մարմինների միջոցով: Հեղինակն ապացուցում է, որ հայ բնակչության պաշտպանության նպատակով օսմանյան մայրաքաղաքից Կիլիկիա ուղարկած բանակի վաշտերը, որոնք հայերի կողմից ընդունվեցին խանդավառությամբ և ծափերով, անմիջապես սկսեցին հայերի ձեռքում եղած սակավաթիվ զենքը հավաքել: Դրանից հետո նրանք նախապատրաստվեցին ջարդն ավարտին հասցնելուն: Առաջին ջարդերը տևել էին ապրիլի 1-3-ը: Ապրիլի 4-ի «խաղաղության» գինը հազարավոր հայերի կյանքն էր: Ապրիլի 7-ին լույս տեսավ երիտթուրքական «Իթիդալ» թերթի նոր համարը, որը լի էր հայերի դեմ ուղղված քինախնդիր հոդվածներով, վայրենի ատելությամբ, զրպարտություններով. հայերը մեղադրվում էին պետական դավաճանության, թուրքական իշխանությունների դեմ ապստամբություն բարձրացնելու մեջ: Թերթն ազդարարում էր, որ հայերը ցանկանում են «պետություն ստեղծել» և ոտքի են ելել հեղափոխության «հավասարություն և եղբայրություն» սկզբունքների դեմ: Այդ համարով թերթը, փաստորեն, նոր կոտորած էր նախապատրաստում: Ապրիլի 12-ին սկսվեց Ադանայի հայության նոր ջարդը: Թուրքական թաղամասում հնչած սադրիչ կրակոցի հետևանքով լուրեր հորինվեցին, թե հայերը հարձակվել են թուրքերի վրա, հրդեհել մզկիթ-

ները, սպանել թուրքերին: Վերջիններին «փրկելու» նպատակով բանակի զինվորները շրջապատեցին հայկական թաղերը և սկսեցին կոտորածները: Երկրորդ ջարդի առաջին օրը Մերսինի նավահանգստում կայանած ֆրանսիական նավի ծառայող մի սպա նկարագրում է, թե զոհված հայերի ինչքա՜ն դիակներ են թուրքերը թափել Սիհուն և Ջհան գետերը: Ինչ չէին հասցրել կոտորածի առաջին օրերին, ավարտին հասցրին երկրորդ կոտորածի ժամանակ: Հրդեհվեց քաղաքի 3/4-ը՝ կրակի և մոխիրների տակ թողնելով հազարավոր անմեղների: Ջարդեր եղան ոչ միայն Ադանայում, այլև վիլայեթի բոլոր սանջակներում (Ադանա, Ջեբել-Բերեքեթ, Կոզան), գյուղերում, ավաններում: Հալեպի վիլայեթի բոլոր սանջակները (Հալեպ, Մարաշ), նաև գավառակները ենթարկվեցին ահավոր սպանդի: Հեղինակը չի անտեսում ոչ մի փաստ, ոչ մի մանրուք. անուն առ անուն թվարկվում են բոլոր գյուղերը, ավանները, կոտորածը կազմակերպողները: Աշխատության երեք գլուխներում, որտեղ քննարկված են հայկական Կիլիկիայի բոլոր վայրերի կոտորածները, առանձնապես մի փաստ է գրավում ընթերցողի ուշադրությունը. երկու վիլայեթների, 5 սանջակների բոլոր վայրերի կոտորածներից զերծ մնաց միայն անպարտելի Զեյթունը՝ շրջակա 12 հայաբնակ գյուղերով: 1895–1896 թթ. Զեյթունի ապստամբությունից դասեր քաղած թուրքերը չհամարձակվեցին մոտենալ նույնիսկ նրա շրջակայքին: Զեյթունի անունից սարսափած թուրք ամբոխը չմոտեցավ նաև Ֆոնուզ հայկական գյուղին: Եզրակացությունը մեկն է. եթե դիմադրում ես, չես կոտորվում: Սարսափելի են տարբեր վայրերի կոտորածների նկարագրությունները: Մարդ արարածի դժոխային ուղեղը հորինում է տանջանքի այնպիսի ձևեր, որ անհարիր է անգամ գազանին: Ընթերցողի հիշողության մեջ խարանվում է մի վայրագ թրքուհու՝ Ադանայի մոտակա Խայբրլը գյուղի բնակիչ Սենեմ խանումի ոճրագործությունը: Նա հավաքում է շրջակա գյուղերի բոլոր հայերին, ընտրում գեղեցիկ աղջիկներին, հարսներին և նվիրում թուրք տղամարդկանց: Մնացած կանանց իր հրամանով քշում են գյուղի ամենամեծ փուռը, վրաները նավթ լցնում և այրում: Թուրք «խանումի» հրամանով հայ տղամարդկանց տանում են գետի ափը, որտեղ իր ձեռքով մեկ-մեկ բոլորին մորթում է, գետն են լցնում, և «սիրտը հովանում է»: Ժամանակի հուշագիր Հակոբ Թերզյանը իրավամբ նրան անվանում է «XX դարու անգթության մարմնացումը կնոջական տարազին տակ»:

Աշխատության չորրորդ գլուխն ամենածավալունն է, համարյա կեսը (էջ 181–356): Կազմված է 16 ենթագլուխներից, որոնց խոսուն վերնագրերը փաստում են քննարկվող նյութի անհրաժեշտությունը: Այստեղ քննարկված են աղետյալներին օգնություն ցուցաբերելու խնդիրները. Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի, նպաստամատույց հանձնախմբի, ՀՅԴ Կ. Պոլսի կոմիտեի հովանավորությամբ գործող «Կարմիր խաչի» առողջապահական խմբի, Ազգային ժողովի՝ այդ ուղղությամբ ծավալած գործունեությունը: Ողջ արևմտահայությունը մեծ ջանքեր գործադրեց՝ պետական մարմինների առաջ ձայն բարձրացնելով զոհվածների ապահովագրական գումարները նրանց հարազատներին վերադարձնելու համար. կառավարությունը մեծ դժկամությամբ և մասնակիորեն կատարեց այդ պահանջները: Հատուկ քննության առարկա է դառնում զոհերի թիվը պարզելու հարցը: Բ. Դուռը հանրությանը կեղծ փաստեր էր հաղորդում իսլամ և հայ սպանվածների թվի վերաբերյալ. հայերինը մի քանի անգամ նվազեցվում էր, մեծացվում զոհված մահմեդականների քանակը: Կ. Պոլսի երիտթուրքական «Թանին» օրաթերթը հրատարակում է Փարիզի օսմանյան դեսպանատան հայտարարությունը, որտեղ ընդգծվում էր, որ բոլոր կողմերի զոհերի թիվը չի անցնում 4 հազարից, ըստ որում, նշվում է 1924 իսլամ՝ սպանված, 533՝ վիրավորված և 1455 հայ՝ սպանված, 383՝ վիրավորված: Հայտարարության մեջ նըշվում էր, որ 20 կամ 30 հազար զոհ նշելը քրիստոնյաների հիվանդ երևակայության արդյունք է: Քննարկելով բոլոր փաստերը, մանրամասն բացահայտելով

կեղծիքները՝ հեղինակն ամբողջ Կիլիկիայում սպանվածների թիվը նշում է 31–32 հազար, որոնցից հայեր՝ 29–30 հազար: Այդ թիվը վերաբերում է սոսկ ապրիլի 1–13-ը տեղի ունեցած ջարդերին: Սակայն կոտորածներից հետո սովից, ցրտից, նյարդային ցնցումներից մահացել են 8000-ից ավելի մարդ: Համադրելով բոլոր տվյալները՝ հեղինակն ընդհանրացնում է, որ զոհվածների ընդհանուր թիվը մոտավորապես 40 հազար է: Առանձնակի հաշվարկներ են կատարվում հայության կրած նյութական կորուստների ուղղությամբ. նշվում է, որ միայն Ադանա քաղաքում հայերի նյութական կորուստները կազմել են երեք հարյուր հազար օսմանյան ոսկի (1909 թ. գներով): Հետաքրքիր վերլուծություն է արված «Ովքեր էին կազմակերպել կոտորածները» ենթագլխում: Այդ դեպքերը կատարվեցին այն օրերին, երբ Կ. Պոլսում տեղի էր ունենում սուլթան Աբդուլ Համիդի կողմնակիցների զինվորական ապստամբությունը: Դրանց համընկնումը շատերին դրդում է մտածել, որ ջարդերն իրականացվել են Աբդուլ Համիդի հրամանով: Այդ կարծիքին էր նաև դեռևս 1907 թ. վերջերից երիտթուրքերի հետ համագործակցող ՀՅ Դաշնակցությունը, որի Ժնևի կենտրոնը 1909 թ. մայիսին հանդես եկավ հայտարարությամբ, ըստ որի, ճիշտ չէր կոտորածների մեջ մեղադրել երիտթուրքերին: Դեռ երկու տարի պետք է անցներ, որ ՀՅԴ-ն զգար իր սխալը, հանդես գար այլ հայտարարությամբ և հեռանար «իթթիհադականներից»: Անաչառ քննարկելով բոլոր փաստերը, համադրելով ականատեսների աշխատությունները, Կ. Պոլսի՝ եվրոպական պետությունների դեսպանների կարծիքները՝ Հ. Սիմոնյանը հանգում է այն եզրակացության, որ «Կիլիկյան արհավիրքների պատասխանատուները երիտթուրքերն էին. իրենք էին, որ հրահրեցին մոլեռանդ ժողովուրդն ու զինվորը՝ հայերի դեմ» (էջ 217): Գրքում արտակարգ հմտությամբ ներկայացված են թուրքական խորհրդարանում կիլիկյան աղետի բուռն քննարկումները: «Կրակոտ» վիճաբանությունների ընթացքում խորհրդարանի թուրք պատգամավորները կոտորածների ողջ մեղքը բարդում են հայ ֆիդայիների վրա: Նրանց են միանում քուրդ պատգամավորները: Թուրքական խորհրդարանի հայ անդամները՝ Վարդգեսը (Հովհաննես Սերենկուլյան), Նազարեթ Տաղավարյանը, Համբարձում Պոյաճյանը, ժխտելով ֆիդայիների մեղսակցության վարկածը, պահանջում են մանրազնին քննություն կատարել և խստորեն պատժել մեղավորներին: Հարցը քննարկվում է խորհրդարանի մի քանի նիստերում (ապրիլի 18-ին, 28-ին, 30-ին, մայիսի 10-ին և 11-ին): Ի վերջո, խորհրդարանն ընտրեց երկու հոգուց բաղկացած քննիչ հանձնախումբ, որի անդամներն էին Հակոբ Պապիկյանը և Յուսուֆ Քեմալ բեյը: Հայ անդամը հայտնի էր իր «թունդ թուրքասիրությամբ», նա «նվիրյալ իթթիհադական էր և գտնում էր, որ օսմանյան հայրենիքի անբաժանելիության գաղափարի շուրջը պետք է համախմբվեն բոլորը՝ անկախ ազգային պատկանելությունից» (էջ 292): Նրան քննիչ հանձնախմբի անդամ էին ընտրել՝ նկատի ունենալով այդ հանգամանքը: Նույն պատճառն առաջացրել էր Ադանայի հայ համայնքի բողոքը: Մայիսի 16-ին այդ երկու անդամը հասան Ադանա: Հակոբ Պապիկյանը աներկյուղ և անկողմնապահ քննություն է սկսում, որի արդյունքները ցնցում են նրան: Դեպքերի ականատես Սուրեն Պարթևյանը գրում է, որ իր ազգությունը գրեթե ուրացած հայը «արյուն-արցունք լացավ կիլիկյան գերեզմաններուն վրրա» (էջ 294): Հայերի անմեղությունը հավաստող փաստերը գաղափարական հեղաբեկում առաջացրին, և ցեղի ոգին արթնացավ նրա մեջ: Ճշմարտությունը բացահայտելու պատճառով նա ընդհարվեց հանձնախմբի թուրք անդամի՝ Յ. Քեմալ բեյի հետ: Քննության ավարտից հետո Հ. Պապիկյանը նավով ուղևորվում է Կ. Պոլիս: Իզմիրի նավահանգստում «Իթթիհադ» թերթի տեղական թղթակիցը տախտակամածի վրա հարցազրույց է ունենում Հ. Պապիկյանի հետ: Վերջինս աներկյուղ իր կարծիքներն է արտահայտում այդ նախճիրի վերաբերյալ, մեղադրում նահանգապետին, զինվորական հրամանատարներին և այլ պաշ-

տոնյաների: Կ. Պոլսում Հ. Պապիկյանը ֆրանսերենով գրված ընդարձակ տեղեկագիր է ներկայացնում պատգամավորական ժողովին, որի ձևակերպումներն ավելի համարձակ էին, քան հարցազրույցինը: Դրա մեջ Պապիկյանը գրում է, որ ջարդերի պատասխանատուն կենտրոնական կառավարությունն է, մեղսակիցը՝ տեղական իշխանությունը և «Միություն և առաջադիմություն» կոմիտեի անդամներն ու պարագլուխները: Պապիկյանն իրավունք չուներ տեղեկագիրը հրապարակել, քանի դեռ պատգամավորական ժողովը չէր քննարկել այն: Կասկածելով, որ երբևէ իր զեկուցումը կլսվի խորհրդարանում, Պապիկյանը տեղեկագրի համառոտ բովանդակությունը հարցազրույցի ձևով փոխանցեց Կ. Պոլսի մամուլին: 1909 թ. հունիսի 25-ին այն լույս տեսավ «Թասվիրի էֆքյար» թերթում: Հարցազրույցի հայտարարությունները ցնցում առաջացրին Կ. Պոլսում: Հ. Պապիկյանի տեղեկագիրը խորհրդարանում պետք է քննարկվեր հուլիսի վերջին. հուլիսի 20-ին Պապիկյանը «հանկարծամահ եղավ», և տեղեկագիրն անհայտացավ: Հանկարծամահ լինելու շինծու վարկածին ոչ ոք չհավատաց: Բոլորը հասկացան, որ նրան սպանել են թունավորելով: Հայերը սգացին նրա մահը՝ դատապարտելով իրենց, որ նրան մեղադրել են թուրքասիրության մեջ, իսկ նա իր կյանքը զոհեց հանուն ազգի և ճշմարտության: Ժամանակ անց հայերը կարողացան գտնել անհետացած տեղեկագրի սևագիրը, գաղտնի տպեցին և ցրեցին: Մի օրինակն ընկավ անգլիական "*Times*" թերթի թղթակցի ձեռքը, որը մեծ նախաբանով և ընդարձակ մեջբերումներով հրատարակեց իր թերթում: Տեղեկագիրն ամբողջությամբ լույս տեսավ ֆրանսերեն "*Pro Armenia*" թերթում, 1913 թ. ապրիլի 25-ին՝ Ֆրենսիս Պրեսանսեի առաջաբանով: Մեծ հայասերը, համոզված, որ Ադանայի ջարդերի կազմակերպիչը թուրքական կառավարությունն է, զգուշացնում էր արևմտահայությանը, որ կարող են լինել ավելի լայնածավալ կոտորածներ: Եվ նա չսխալվեց: «Մարդասիրությունն ընդդեմ մարդատյացության» ենթագլխում հեղինակն անուն առ անուն հիշում և իր երախտիքի խոսքն է ուղղում իրենց կյանքը վտանգի ենթակած և հայերին օգնած ամերիկյան ու ֆրանսիական միսիոներների, հիսուսյան և ֆրանցիսկյան հայրերի, գերմանացի գործարանատերերի: Գիտնականը միևնույն ժամանակ ընդգծում է մեծ տերությունների պաշտոնական վարքագիծը այդ եղկելի իրադարձությունների նկատմամբ: Երիտթուրքական կառավարության հետ իրենց հարաբերությունները չփչացնելու համար նրանք այդ դեպքերի անտարբեր ականատեսը եղան: Հեղինակի անաչառության ապացույցն է, որ նա ամեն հուշագրությունից, ականատեսների վկայություններից, նույնիսկ ամենափոքր հոդվածներից մեկ առ մեկ հավաքել է փաստեր և մատուցել ընթերցողներին՝ ցույց տալով, որ Թուրքիայում էլ եղել են «մարդ» կոչվելու արժանի մահմեդականներ (թուրքեր, քրդեր, չերքեզներ), որոնք իրենց կյանքի գնով օգնում էին հայերին, փրկում նրանց կյանքը: Ցավոք, քիչ էին նրանք, հեղինակը թվարկում է մոտ 30 անուն, մանրամասն վեր հանելով փաստերը՝ նշում է, թե նրանցից ամեն մեկը քանի հայ ընտանիքի կյանք է փրկել, ինչ գնով:

Ուշադրության է արժանի այս բարձրարժեք աշխատության խիստ սեղմ (ընդամենը 2 էջ), բայց բովանդակությամբ արտակարգ տարողունակ վերջաբանը: Նշելով, որ 1909 թ. Կիլիկիայի աղետը ամբողջ հայության գոյության դրսևորումներից մեկն է՝ հեղինակը զգուշացնում է գալիքի համար. մեր ժողովուրդն ամեն րոպե պետք է պատրաստ լինի դիմակայելու հազարամյակի նոր մարտահրավերներին: Ընդգծելով, որ եթե հայությունն ունենար իր ազգային պետականությունը, ապա չէին լինի 1895-1896 թթ. կոտորածները, 1909 թ., կիլիկյան ջարդերը և 1915-1923 թթ. հայկական Մեծ եղեռնը՝ ցեղասպանությունը, վաստակաշատ գիտնականը պատգամում է ողջ աշխարհի հայությանը՝ «աչքի լույսի պես պահպանել դժվարին երկունքով ծնված Հայաստանի Հանրապետությունը»:

Աշխատության ուշագրավ կողմերից են նրան կցված երեք հավելվածները: Առաջին հավելվածը ներկայացնում է «Նյու Յորք թայմս» թերթի մի քանի հոդվածները և թղթակցությունները, որոնք վերաբերում են այդ օրերին՝ 1909 թ. ապրիլին կատարված իրադարձություններին: Հրատարակված են նույնպես ամերիկյան թղթակիցների հեռագրեր, որոնք նշում են, թե թուրքերը ինչպես են սպանել ամերիկացի միսիոներների, ինչ վտանգ էր սպառնում Բեյրութում գտնվող ամերիկացի կին միսիոներներին: Թղթակցություններում փաստեր են հաղորդվում ջարդերի իրականացման վայրերի, կոտորված հայերի թվաքանակի, թուրքական զորքերի՝ կոտորածների նախաձեռնող և մասնակից լինելու մասին: Հեռագրերը և թղթակցությունները սկսվում են 1909 թ. ապրիլի 19-ից, վերջանում սեպտեմբերի 20-ով: Բոլոր փաստաթղթերն էլ ապացուցում են, որ կիլիկյան ջարդերի պատասխնատուն երիտթուրքերն էին: Երկրորդ հավելվածը կրում է «Կիլիկյան պատկերներ» խորագիրը և մոտավորապես 100 էջում (391–488) պարունակում է բազմաթիվ նկարներ, որոնք պատկերում են Կիլիկիայի քաղաքները, ամրոցները, բերդերը, հրապարակները, եկեղեցիները, վարժարանները, հրդեհված թաղամասերը: Փաստորեն, այդ հավելվածը լրացնում է գրքի բովանդակությունը: Աշխատության երրորդ հավելվածը Ադանայի քրիստոնյա հոգևոր պետերի բողոքագիր – խնդրանքն է՝ ուղղված սուլթան Մուհամմեդ Ե-ին և թվագրված 1909 թ. հունիսի 4 (17)-ով: Այս բոլորից հետո պարզ է դառնում գրքի արտակարգ հարուստ և արժեքավոր, արդիական հնչեղություն ունեցող նշանակությունը: Միանգամայն համաձայն ենք մեծարգո հեղինակի այն եզրակացությանը, որ գիրքը նախատեսված է պատմաբանների, բայց առավելապես՝ «պետական ու քաղաքական գործիչների համար». որևէ փաստաթուղթ ստորագրելիս երկար խորհել դրա պատճառահետևանքային կապի մասին (տե՛ս աշխատության անոտացիան):

Այս աշխատությունը դաս է համայն հայությանը:

**ԿՈՍՏԱՆԴՅԱՆ Է. Ա.**
Պատմական գիտությունների դոկտոր